ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2011-13 ԹԹ.

ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2011-13 ԹԹ. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԵՐԻ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2007թ.-ի հոկտեմբերի 30-ի թիվ 344Ն որոշման Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացրել 2011-13թթ. գործարար ծրագրերը, որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարություններն, ինչպես նաև հիմնական ցուցանիշների կանխատեսումներն առաջիկա երեք տարիների համար:

Ամփոփման համար հիմք են հանդիսանում 28.02.2011 թվականի դրությամբ գործող 9 ապահովագրական ընկերության կողմից 2011-13թթ. համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրերը:

ԵՐԵՎԱՆ
2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. *ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ* 3

2. *ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ* 5

3. *ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* 6

4. *ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ* 7

5. *ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ* 9

6. *ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2011-13 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ* 10

7. *ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ* 21

8. *ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ* 22

9. <u>ՀԱՎԵԼՎԱԾ 1</u> ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ *23*

10. <u>ՀԱՎԵԼՎԱԾ 2</u> ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ *24*

ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների կողմից հիշատակվել են 2010թ.-ի ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, որոնք որոշակիորեն ազդել են ընկերության գործունեության վրա, այդ թվում.

- *ԱՊՊԱ, 2010թ.-ի մայիսի 18-ին ՀՀ ԱԺ-ի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին օրենքի ընդունում,* ինչը ընկերությունների համար լրացուցիչ ծախսերի պատճառ հանդիսացավ: Օրենքի ընդունումով պայմանավորված՝ ապահովագրական ընկերությունները խոշորացրին կառավարչական և գովազդային ծախսերը, ընդլայնեցին և շարունակում են ընդլայնել գործակալան ցանցը, ավելացրին աշխատակիցների թիվը (հատկանշական է, որ 31.12.2010 թ.-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովագրական ընկերությունների աշխատակիցների թիվն աճել է 2.4 անգամ):

- *Համաշխարհային ֆինանսական ճգնաժամին հաջորդող հետճգնաժամային փուլ:* 2010 թվականին շարունակել են նվազել կամ դանդաղ աճել ֆինանսական հաստատությունների կողմից վարկերի տրամադրման տեմպերը, նվազել է գրավի առարկա հանդիսացող գույքի, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության նկատմամբ պահանջարկը, խստացել են վարկերի տրամադրման պահանջները: Նշված զարգացումները հանդիսացել են ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրվող ապահովագրավճարների նվազման պատճառ:

- *ՀՀ ԿԲ-ի կողմից նորմատիվային դաշտի փոփոխություն և նոր կանոնակարգերի ընդունում,* 2011 թվականի սկզբին ընկերությունները պարտավոր էին համալրել ընդհանուր կապիտալը մինչև 1.5 մլրդ դրամ, ինչպես նաև $Ն_3$ նորմատիվի փոփոխությամբ պայմանավորված՝ փոփոխել որոշ վերաապահովագրական պայմանագրեր, որոնք չէին բավարարում նորմատիվի պահանջներին: Ապահովագրական ընկերությունների նորմատիվային դաշտն ավելի համապատասխանեցվելով Solvency 2-ի պահանջներին՝ խիստ փոխվել է $Ն_1^2$ նորմատիվի հաշվարկը, որը, բացի հիմնական ապահովագրական ռիսկերից, 2011 թվականի հունվարի մեկից պետք է հաշվարկվի ներառելով վարկային, գործառնական և արտարժութային ռիսկերը: Վերջին փոփոխությունը խնդիրներ չի առաջացնում ընկերությունների մոտ, քանի որ կապիտալի համալրման պահանջի հետ զուգահեռ նվազել է նշված նորմատիվի խախտման հավանականությունը: Տարվա ընթացքում ԿԲ կողմից խստացվել են նաև երաշխիքի ապահովագրության տրամադրման պայմանները, որը պատճառ է հանդիսացել այս դասի գծով ապահովագրավճարների կտրուկ նվազման:

- *2010 թվականին ՀՀ-ում արձանագրված բարձր գնաճ,* ինչը կարող է պատճառ հանդիսանալ բնակչության ապահովագրական ծախսերի կրճատման, հատկապես ֆիզիկական անձանց կամավոր ապահովագրության դասերում:

- *ՀՀ դրամի կտրուկ արժեզրկումը 2010 թվականի սկզբին և արժևորումը մինչև դեկտեմբեր,* ինչն ընկերությունների մեծ մասին հասցրել է խոշոր վնասներ:

- *Տարածաշրջանում տնտեսական և քաղաքական անկայուն մթնոլորտ:*

- *Վերաապահովագրական ընկերությունների կողմից սակագների պահպանում միևնույն մակարդակի վրա:*

- *Որոշ ապահովագրական ընկերությունների և բանկերի խիստ փոխկապակցված վարքագիծ,* ինչը պայմանավորված է բանկերի և ապահովագրական ընկերությունների միևնույն հոլդինգի մեջ լինելու կամ շահերի միևնույն կենտրոնն ունենալու հետ:

- *Որոշ բանկերի և վարկային կազմերպությունների կողմից որպես գրավ ընդունած անշարժ և շարժական գույքը չապահովագրելը,* ինչի հետևանքով բանկերը վարկառուներից լրացուցիչ գումարներ են ստացել ապահովագրման ենթակա ռիսկերն իրենց վրա վերցնելով, իսկ ապահովագրական ընկերությունները զրկվել են իրենց կանխատեսումների համաձայն համապատասխան չափով ապահովագրավճարներ ստանալու հնարավորությունից:

- *Միացումների արդյունքում գործող ապահովագրական ընկերությունների թվի կրճատում և ընկերությունների միջև մրցակցության սրացում:* 2010 թվականի ընթացքում 3 ընկերություններ փոխանցել են իրենց ապահովագրական պորտֆելներն այլ ընկերությունների, ինչի հետևանքով այս ընկերությունները փաստացի դադարեցրել են ապահովագրական գործունեությունը, իսկ լիցենզիաները հետ են կանչվել Կենտրոնական բանկի կողմից: Ընկերությունների թվի կրճատումը և խոշորացումը, ինչպես նաև ԱՊՊԱ օրենքի ընդունումը դիտարկվում է որպես ապահովագրական ընկերությունների միջև մրցակցության սրացման պատճառ, քանի որ 2010 թվականին ապահովագրական շուկայում որոշ ընկերությունների մասնաբաժինն ավելացնելու ագրեսիվ քաղաքականությունն ազդել է մնացածների մասնաբաժնի կրճատման վրա:

- *Որակյալ մասնագետների պակասը կամ բացակայությունը:*

- *Առողջապահության ոլորտում ֆինանսական հոսքերի անվերահսկելիությունն ու թափանցիկության բացակայությունը,* որոնք խոչընդոտներ են ստեղծում առողջության ապահովագրության լայնածավալ իրականացման համար:

- *2010 թվականի ընթացքում բժշկական ծառայությունների գնաճ 15-20%*, ինչը պատճառ է հանդիսացել է առողջության ապահովագրության գծով հատուցումների ծավալային աճի, և պարտադրում է այս ոլորտում մասնագիտացած ընկերություններին վերանայել սակագները:

- *Ապահովագրական գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ համակարգչային ծրագրային ապահովվածության բացակայությունը:*

- *Հավաստի վիճակագրական տվյալների բացակայությունը,* ինչը խոչընդոտ է հանդիսանում ապահովագրական սակագների ճշգրիտ և հիմնավոր որոշման, ինչպես նաև ապահովագրության նոր դասերի (մասնավորապես՝ առողջության ապահովագրության) ներդրման համար:

- *Ապահովագրական ոլորտի նկատմամբ ազգաբնակչության տեղեկացվածության բարձրացումը,* ԱՊՊԱ օրենքի ընդունմամբ: Չնայած այս հանգամանքին ապահովագրական ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը դեռևս բավարար չէ:

- *Ապահովագրական սակագների նվազման միտումները,* ինչը սակայն երկար չի

շարունակվի, քանզի ընկերությունների գնահատմամբ կիրառվող սակագներն արդեն իսկ հասել են իրենց թույլատրելի նվազագույն սահմաններին, իսկ որոշ ընկերությունների կողմից սակագների նվազման միտումները հանդիսանում են մրցակցության սրացման արդյունք:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ

Ապահովագրական ընկերությունների նպատակներն, ըստ էության, փոփոխությունների չեն ենթարկվել և հիմնականում համընկնում են 2010-12 թթ. գործարար ծրագրերով ֆիքսված նպատակների հետ: Դրանք են՝

- հաճախորդների սպասարկման ցանցի ընդլայնում և կատարելագործում,
- ակտիվ մարքեթինգային (այդ թվում՝ գովազդային) քաղաքականության իրականացում,
- դիրքերի ամրապնդում տեղական ապահովագրական շուկայում,
- շահութաբերության ապահովում,
- նոր ապահովագրական պրոդուկտների մշակում և ներդնում, ինչը կպահանջի, մասնավորապես, տնտեսության նոր նպատակային հատվածների հետազոտում,
- մատուցվող ապահովագրական ծառայությունների որակի բարձրացում, ապահովադիրների հետ առողջ և թափանցիկ հարաբերությունների ձևավորում և պահպանում,
- հայցերի կարգավորման արդյունավետության բարձրացում,
- նոր շուկաների գրավում,
- ապահովագրական գործունեության համար անհրաժեշտ ծրագրային համակարգի ներդրում և արդեն ներդրված համակարգերի կատարելագործում,
- ընկերության ֆինանսական կայունության բարձրացում կանոնադրական կապիտալի ավելացման, ինչպես նաև ստացված շահույթի վերաներդրման միջոցով,
- ապահովագրական և վերաապահովագրական պորտֆելների դիվերսիֆիկացիա,
- ներդրումային քաղաքականության իրականացում դիվերսիֆիկացված և իրացվելի պորտֆելի միջոցով, ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացում,
- գործընկերների հետ կապերի խորացում, պետական մարմինների հետ համագործակցություն,
- վերաապահովագրության քաղաքականության զարգացում, վերաապահովագրողների հետ համագործակցության ամրապնդում և ընդլայնում,
- ընկերության կառուցվածքի և կառավարման արդյունավետության բարձրացում, ընկերության գործունեության ներքին կանոնակարգման համակարգի բարելավում, ներքին վերահսկողության, ռիսկերի կառավարման համակարգերի ներդնում,
- կադրերի աշխատանքի արդյունավետության բարձրացում ի հաշիվ աշխատանքի արդյունավետության գնահատման, խրախուսման և տույժերի մեխանիզմների մշակման և կիրառման, կադրերի վերապատրաստման և որակավորման ստուգման մեխանիզմների կիրառման միջոցով,
- մասնաճյուղերի ստեղծում, գործակալական ցանցի ընդլայնում և կատարելագործում՝ ընկերության ծառայությունները առավել հասանելի դարձնելով մարզերում,

- ինտերնետ կայքերի պատշաճ շահագործում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունները ծառայություններ են մատուցելու ցամաքային տրանսպորտի, օդանավերի, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, հրդեհից ու բնական աղետներից գույքի, փոխադրվող գույքի (բեռների), երկաթուղային տրանսպորտի, առողջության, ընդհանուր պատասխանատվության ապահովագրության գծով, ինչպես նաև դժբախտ պատահարներից, աջակցությանև երաշխիքի տրամադրման ապահովագրության գծով[1]: Նախատեսվում է կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ ապահովագրական շուկայում ներդնել վարկի ապահովագրությունը:

Ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական ծառայությունների մատուցման համար թիրախային կենտրոն է մնալու Երևան քաղաքը: Սակայն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքի ընդունմանը զուգընթաց, ապահովագրական ընկերությունները ակտիվ գործողություններ են ձեռնարկել նաև մարզերում: Կանխատեսվող ժամանակահատվածում ընկերությունների մի մասը նախատեսում են մասնաճյուղերի ստեղծում, իսկ մյուսները՝ գործունեության ծավալում գործակալական ցանցի միջոցով:

Ապահովագրական ընկերությունների հիմնական մասը որպես հաճախորդ թիրախային խմբեր է ընտրում ֆիզիկական անձ ապահովադիրներին: Այնուամենայնիվ, որոշ ընկերություններ շարունակում են շեշտը դնել իրավաբանական անձ ապահովադիրների վրա: Ըստ էության, ապահովագրական ընկերությունների հաճախորդներն են հանդիսանում տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպությունները, պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, բանկերից և վարկային կազմակերպություններից վարկ վերցնող քաղաքացիները, արտերկիր մեկնող ուղևորները, իսկ ԱՊՊԱ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ նաև ավտոտրանսպորտային միջոցների բոլոր սեփականատերերը:

Ներկայումս ապահովագրական ընկերությունները մեծամասամբ նախընտրում են օգտվել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հուսալիության չափանիշներին բավարարող վերաապահովագրական ընկերությունների ծառայություններից: 2010 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունները շարունակել են կապերի ամրապնդումը, իսկ ոմանք նոր կապեր են հաստատել տարբեր վերաապահովագրական ընկերությունների և բրոքերների հետ: Ապահովագրական ընկերությունների ներկայիս հիմնական գործընկերներ են հանդիսանում ֆրանսիական Սքոր, լեհական Պոլիշ Ռե, սլովենական Սավա, գերմանական Մյունիխ Ռե, Հանովեռ Ռե, ռուսական Ինգոսստրախ, Ռոսնո, Ալյանս վերաապահովագրական ընկերությունները, ինչպես նաև

[1] «Հիմնական ցուցանիշների փոփոխությունը 2011-13թթ. Ընթացքում» գլխում ներկայացված են ապահովագրության տվյալ դասի տեսակարար կշիռներն ընդամենը դասի մեջ տարբեր ցուցանիշների գծով:

Լլոյդս ապահովագրական շուկայի սինդիկատներ, միջազգային վերաապահովագրական շուկայի առաջատար բրոքերներ և այլն: Ապահովագրական ընկերությունների գերակշիռ մասը հիմնականում համագործակցում է անգլիական ու եվրոպական շուկայի վերաապահովագրողների և բրոքերների հետ: Ապահովագրական ընկերություններն օգտվում են նաև տեղական բրոքերների ծառայություններից, որոնք նրանց մատուցում են հիմնականում վերաապահովագրական միջնորդի ծառայություններ:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ապահովագրական ընկերությունների կանխատեսմամբ 2011-13թթ. ընթացքում իրենց գործունեության վրա հնարավոր ազդեցություն կարող են ունենալ հետևյալ երևույթները.

- *հետճգնաժամային անկանխատեսելիության մեծացման հետևանքով՝ ընկերությունները ձևավորել են տարբեր սպասումներ. մի մասը կանխատեսում են համաշխարհային և ՀՀ տնտեսության աշխուժացում, մյուսները՝ անկում, իսկ երրորդները կանխատեսում են, որ առաջիկայում ՀՀ տնտեսությունում և մասնավորապես՝ ապահովագրական համակարգում կտրուկ փոփոխություններ չեն լինի,*
- *փոխարժեքային տատանումներ,* որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ ընկերությունների շահութաբերության վրա,
- *որոշ վերաապահովագրողների վարկանիշերի հնարավոր ցածրացում*՝ հաշվի առնելով տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը որոշ խոշոր վերաապահովագրողների վրա,
- *հայտնի վերաապահովագրողների կողմից ՀՀ ապահովագրական շուկայի նկատմամբ հետաքրքրության առաջացում*՝ պայմանավորված նոր շուկաների ներգրավման գործընթացով,
- *տեղական ապահովագրական ընկերությունների կողմից նոր վերաապահովագրողների հետ հարաբերությունների հաստատում*՝ բավարարելու համար 2011թ.-ի հունվարի 1-ից գործող վերաապահովագրողներին հուսալի ճանաչելու ավելի խիստ չափանիշները,
- *հուսալի վերաապահովագրողների կողմից տարվող սակագնային քաղաքականության հնարավոր փոփոխություններ (մասնավորապես՝ մի շարք ընկերություններ կանխատեսում են վերաապահովագրողների կողմից առաջարկվող սակագների աճ, որոշ ընկերություններ՝ նվազում), ինչպես նաև վերաապահովագրողների կողմից առավել խիստ պայմանների հնարավոր առաջադրում՝ կապված հատկապես վերջին տարիներին աղետային ռիսկերի տեղի ունենալու հավանականության մեծացմամբ,*
- *ՀՀ ԿԲ-ի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի գործարկման հետ կապված դժվարություններ, մյուս կողմից՝ նշված ակտերի գործարկման արդյունքում ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում և ռիսկերի առավել հուսալի կառավարում,*
- *ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքի ընդունման դրական հետևանքներ.* բոլոր ընկերությունները փաստում են, որ օրենքի ընդունումը կբարձրացնի բնակչության իրազեկության մակարդակն ապահովագրության ոլորտի վերաբերյալ և խթան կհանդիսանա ապահովագրական շուկայի զարգացման համար,

- *շուկայի կենտրոնացում և ապահովագրողների խոշորացում,* գործող փոքր ապահովագրական ընկերությունների քանակի նվազում ի հաշիվ մրցակցության սրացման և նորմատիվային խստացումների,

- *որոշ ընկերություններ կանխատեսում են նոր մրցակիցների մուտք տեղական ապահովագրական շուկա, իսկ որոշ ընկերություններ դա համարում են քիչ իրատեսական՝ պայմանավորված ֆինանսական ճգնաժամով,*

- *ապահովագրական շուկայի աճի դանդաղում,*

- *շինարարության և ներմուծման նախկին ծավալների վերականգնում և աճ,* ինչի արդյունքում կաճեն որոշ դասերի գծով ստացվող ապահովագրավճարները (օրինակ՝ փոխադրվող գույքի (բեռների), ավտոտրանսպորտային միջոցների, դժբախտ պատահարներից, առողջության և այլն),

- *բժշկական ծառայությունների գների հավանական աճ,* ինչը կարող է առողջության ապահովագրության սակագների աճի պատճառ հանդիսանալ,

- *ֆինանսական հաշտարարի ինստիտուտի գործունեությունը,* որը դրական ազդեցություն կունենա ապահովագրական շուկայի զարգացման, ապահովագրական ծառայությունների նկատմամբ հասարակական պահանջարկի մեծացման վրա,

- *ապահովագրական սակագների նվազում*՝ մրցակցությանը դիմակայելու համար,

- *առավել արդյունավետ վերահսկողության իրականացում վերահսկողական նոր ինստիտուտների ձևավորմամբ, մասնավորապես՝ արդեն իսկ գործող «Հայաստանի ավտոաապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության շնորհիվ,*

- *պարտադիր ապահովագրության ներդրմանը զուգահեռ որոշ ինստիտուտների/համակարգերի ներդրում:* Ակտուարական համակարգի ներդրման հետ կապված հիմնական խնդիր կարող է հանդիսանալ ակտուարական հաշվարկների համար օգտագործվող վիճակագրական տվյալների ոչ բավարար ճշգրիտ լինելը,

- *որակյալ մասնագետների նկատմամբ պահանջարկի աճ,*

- *վնասաբերության ցուցանիշի աճի միտում,* մասնավորապես՝ ավտոտրանսպորտային միջոցների և առողջության ապահովագրության գծով,

- *կյանքի ապահովագրության զարգացում կենսաթոշակային բարեփոխումների շնորհիվ,*

- ընկերություններում առկա ծրագրային խնդիրների լուծման արդյունքում ապահովագրական ծառայությունների մատուցում ինտերնետի միջոցով,

- առողջության պարտադիր ապահովագրության ընդունում առաջիկա տարիներին:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների կողմից նշված *հնարավորություններն են*՝

- ՀՀ տնտեսության կանխատեսվող շարունակական աշխուժացումը, շինարարության ծավալների և բանկերի կողմից տրամադրվող վարկավորման ծավալների կանխատեսվող աճը,
- Հասարակության գիտակցության մեջ ապահովագրության դերի և կարևորության արմատավորումը,
- ԱՊՊԱ-ի հաշվին ընկերությունների պորտֆելի կտրուկ աճը,
- հնարավոր է, որ զարգացած երկրների ապահովագրական շուկաների կրճատումը ստիպի վերաապահովագրողներին նոր շուկաներ ներխուժել, ինչի արդյունքում անգամ այն վերաապահովագրողները, որոնք նախկինում հետաքրքրված չեն եղել հայկական շուկայով կարող են տեղական ռիսկերն ընդունել վերաապահովագրության,
- օրենսդրության խստացման, մրցակցության սրացման հետևանքով ապահովագրական ընկերությունների թվի կրճատումը, առկա ապահովագրական ընկերությունների կողմից նոր մասնաբաժինների տիրանալու հնարավորությունը, առողջ, արդյունավետ և ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերությունների հաստատման հնարավորությունը,
- ակտուարների ինստիտուտի ներդրման հետևանքով ընկերությունների ընդհանուր ռիսկայնության նվազումը և պորտֆելի կառավարելիության բարձրացումը:

Ապահովագրական ընկերությունների կողմից նշված *սպառնալիքներն են*՝

- գնաճի նախատեսվածից բարձր տեմպերը՝ ինչը կարող է հանրությանը ստիպել ավելի զուսպ լինել ծախսերի տեսանկյունից,
- հետճգնաժամային երևույթների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, տնտեսական աճի դանդաղ տեմպը,
- տարածաշրջանի տնտեսական և քաղաքական անկայունությունը,
- փոխարժեքի տատանումների հետ կապված ռիսկերը,
- նորմատիվային դաշտի խստացումը,
- որակյալ և փորձառու մասնագետների բացակայությունը,
- բժշկական ծառայությունների հավանական գնաճը,
- վերաապահովագրողների կողմից առաջարկվող ավիացիոն ռիսկերի ապահովագրության սակագների աճը,
- ագրեսիվ մրցակցությունը գործող ապահովագրական ընկերությունների միջև,
- նոր ապահովագրական ընկերությունների մուտքը և դրա հետևանքով մյուս ընկերությունների մասնաբաժինների նվազումը,

- ապահովագրության մի շարք դասերի գծով ապահովագրավճարների նվազումը՝ պայմանավորված տնտեսական աճի տեմպի նվազմամբ, գույքի և ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության կրճատումը՝ պայմանավորված բանկերի կողմից վարկային վարկավորման պայմանների խստացմամբ,
- SS համակարգի բացակայության պայմաններում ՀՀ ԿԲ կողմից ապահովագրության պայմանագրերի ռեգիստրի պահանջների կիրառումը և հաշվետվությունների ներկայացման հետ կապված ժամկետային խստացումները,
- 2011թ.-ի հունվարի 1-ից վերաապահովագրողներին հուսալի համարելու չափանիշների խստացումը,
- ապահովագրական պատահարների, այդ թվում՝ խարդախության աճը,
- առողջապահության, վիճակագրության և ապահովագրության ոլորտների միջև աշխատանքների համակարգման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը,
- կախվածությունը արտասահմանյան կապիտալից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2011-13 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ակտիվներ


Ապահովագրական ընկերություններն ակտիվների գծով կանխատեսում են 14.9% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում ակտիվների մեծությունը 3 տարվա ընթացքում կավելանա 13.2 մլրդ դրամով՝ 31.12.2013 թվականին կազմելով 38.8 մլրդ դրամ: 31.12.2010թ. դրությամբ ակտիվների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում բանկերում ավանդներին (52.5%), բանկային հաշիվներին (13.0%), արժեթղթերին (10.1%) և ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներին (8.9%): Կանխատեսվում է, որ բանկերում ավանդները, ապահովելով տարեկան միջինում 21.1% աճ, 31.12.2013թ. կկազմեն 23.9 մլրդ դրամ կամ ակտիվների 61.5%-ը, արժեթղթերը, ապահովելով 34.5% միջին տարեկան աճ, կկազմեն 6.3 մլրդ դրամ կամ ակտիվների 16.2%-ը, իսկ ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները, ապահովելով տարեկան միջինում 2.6% աճ՝ կկազմեն 2.5 մլրդ դրամ կամ ակտիվների 6.4%-ը:

Ակտիվների կառուցվածքը որոշ չափով կփոխվի. եթե 2010թ. վերջի դրությամբ ապահովագրական ընկերությունների բանկային հաշիվները կազմում են 13.0%, իսկ արժեթղթերը՝ 10.1%, ապա 2013թ. վերջի դրությամբ կանխատեսվում են համապատասխանաբար 4.1% և 16.2% տեսակարար կշիռներ:

Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների կառուցվածքում առանձնակի փոփոխություններ տեղի չեն ունենա: Ինչպես 2010թ.-ի վերջին, այնպես էլ հաջորդ երեք տարիների

ընթացքում ապահովագրական ընկերություններն իրենց տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների 90%-ից ավելին պլանավորում են տեղաբաշխել հիմնականում ՀՀ տարածքում գործող բանկերում որպես ժամկետային ավանդներ (մոտ 70%) և ՀՀ պետական արժեթղթերում (մոտ 20%):


Ապահովագրական ընկերությունների ակտիվների դինամիկան 2010-2013թթ. համար ներկայացված է հետևյալ գրաֆիկի տեսքով.



<u>Պարտավորություններ</u>

Պարտավորությունների գծով ապահովագրական ընկերությունները կանխատեսում են 7.1% միջին տարեկան աճ՝ 2013 թ.-ի վերջին կազմելով 16.1 մլրդ դրամ, ինչը 3.0 մլրդ դրամով ավել է 2010 թ.-ի վերջի ցուցանիշից: Պարտավորությունների կազմում մեծ մասը 2011-13թթ.-ին շարունակելու են կազմել տեխնիկական պահուստները: Ընդ որում՝ եթե 31.12.2010թ.-ի դրությամբ տեխնիկական պահուստներին բաժին էր ընկնում պարտավորությունների 22.3%-ը, ապա 2013թ.-ի վերջին՝ 63.3%: 31.12.2010թ.-ի դրությամբ պարտավորությունների 13.8%-ը կազմող վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների տեսակարար կշիռը տարեցտարի կնվազի և 31.12.2013թ.-ի դրությամբ կկազմի 10.1%:


Ստորև ներկայացված է պարտավորությունների դինամիկան՝ 2010-2013թթ. համար.



<u>Ընդհանուր կապիտալ</u>

Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը երեք տարվա ընթացքում աճելով 10.2 մլրդ դրամով՝ 2013թ.-ի վերջին կկազմի 22.7 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորված կլինի չբաշխված շահույթի կանխատեսվող 79.8% միջին տարեկան աճով: Հարկ է նշել, որ եթե 31.12.2010թ.-ի դրությամբ ընդհանուր կապիտալի կառուցվածքում կանոնադրական կապիտալը կազմում է 93.2%, իսկ չբաշխված շահույթը՝ -0.2%, ապա 2013թ.-ին դրանց տեսակարար կշիռները կանխատեսումների համաձայն կկազմեն համապատասխանաբար 57.1% և 41.1%:

Ստորև ներկայացված են ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալի փաստացի և կանխատեսվող կառուցվածքները համապատասխանաբար 2010 և 2013թթ.-ի վերջի դրությամբ.




Ապահովագրավճարներ և վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ

Ապահովագրական ընկերությունները 2011-13թթ. համար կանխատեսել են ապահովագրավճարների 50.1% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում ապահովագրավճարների մեծությունը 2013թ.-ին կկազմի 27.9 մլրդ դրամ 2010թ.-ի 8.3 մլրդ դրամի փոխարեն: Ապահովագրավճարների հիմնական աճը կանխատեսվում է 2011թ.-ին՝ 153.3%, ինչը պայմանավորված է ՀՀ-ում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման արդյունքում ապահովագրավճարների աճով:

Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարները նշված ժամանակաշրջանում տարեկան կաճեն միջինում 14.3%: Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարները 2013թ.-ի համար կկազմեն 6.0 մլրդ դրամ 2010թ.-ի 4.0 մլրդ դրամի փոխարեն:

Համաձայն կանխատեսումների՝ 2013թ.-ին վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների տեսակարար կշիռը համախառն ապահովագրավճարների մեջ կկազմի 21.4% 2010թ.-ի 48.6%-ի փոխարեն:


Ստորև ներկայացված են համախառն ապահովագրավճարների և վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների դինամիկաները 2010-2013թթ. համար.




Ինչ վերաբերում է ապահովագրավճարների կառուցվածքին, ապա հարկ է նշել, որ եթե 2010թ.-ին ապահովագրավճարների հիմնական մասը բաժին է ընկնում հրդեհից ու բնական աղետներից գույքի, ցամաքային տրանսպորտի, օդանավերի և առողջության ապահովագրության դասերին, ապա 2013թ.-ին ապահովագրավճարների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կկազմեն ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության (54.1%) ապահովագրության դասի գծով հավաքագրվող ապահովագրավճարները:

Ապահովագրության տարբեր դասերի գծով ապահովագրավճարների տեսակարար կշիռներն ընդհանուր ապահովագրավճարների մեջ 2010թ.-ին և 2013թ.-ին ներկայացված են ստորև.

2010թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ



2013թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ




Ապահովագրական հատուցումներ և վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով

Ապահովագրական ընկերությունները կանխատեսում են ապահովագրական հատուցումների 81.7% միջին տարեկան աճ, ինչի հետևանքով 2013թ.-ին նշված ցուցանիշը կկազմի 10.5 մլրդ դրամ: Ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող գումարները տարեկան միջինում կաճեն 26.8%՝ 2013թ.-ին կազմելով 955.9 մլն դրամ: Ըստ կանխատեսումների՝ վերաապահովագրական ընկերություններից ստացվող հատուցումներն աճում են ավելի դանդաղ տեմպերով, քանի որ ապահովագրական ընկերությունները նախատեսում են վերաապահովագրել մեծամասամբ խոշոր և ցածր հավանականություն ունեցող ռիսկերը:

Համաձայն կանխատեսումների՝ 2013թ.-ին ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող գումարների տեսակարար կշիռն ընդամենը ապահովագրական հատուցումների մեջ կկազմի 9.1%՝ 2010թ.-ի 26.9%-ի փոխարեն:

Ստորև ներկայացված են ապահովագրական հատուցումների և վերջիններիս գծով վերաապահովագրողներից ստացվող գումարների դինամիկաները 2010-2013թթ. համար.




Հարկ է նշել, որ 2010թ.-ի ապահովագրական հատուցումների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում ցամաքային տրանսպորտի և առողջության ապահովագրության դասերի գծով ապահովագրական հատուցումները: Ապահովագրական ընկերությունների կանխատեսումների համաձայն ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցումները 2013թ.-ին


ընդհանուր ապահովագրական հատուցումների մեջ կկազմեն ամենամեծ տեսակարար կշիռը՝ 68.2%: Մեծ տեսակարար կշիռ կկազմեն նաև ցամաքային տրանսպորտի և առողջության ապահովագրության գծով ապահովագրական հատուցումները, համապատասխանաբար՝ 12.5% և 11.7%:

Ապահովագրության տարբեր դասերի գծով ապահովագրական հատուցումների տեսակարար կշիռներն ընդհանուր ապահովագրական հատուցումների մեջ 2010թ.-ին և 2013թ.-ին ներկայացված են ստորև.

2010 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ



2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ




Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ

շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (զուտ շահույթ (վնաս)) և այլ ցուցանիշներ


2011-2013թթ. կանխատեսվող ժամանակահատվածում ապահովագրական ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) ցուցանիշը միջին տարեկան կտրվածքով կաճի 25.7%-ով՝ 2013թ.-ին կազմելով 4.1 մլրդ դրամ:

Ստորև ներկայացված է ապահովագրական ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) ցուցանիշի դինամիկան 2010-2013թթ. համար.



Ապահովագրական ընկերությունների համար շարունակելու են եկամտի հիմնական աղբյուր հանդիսանալ ապահովագրական գործունեությունից ստացվող եկամուտները: Ընդ որում՝ կանխատեսվող ժամանակահատվածում ապահովագրական գործունեությունից ստացվող եկամուտները կշարունակեն աճել և առաջիկա երեք տարիներին կկազմեն ավելի մեծ տեսակարար կշիռ:

Ստորև ներկայացված է ապահովագրական ընկերությունների եկամուտների կառուցվածքի դինամիկան 2010-2013թթ. համար՝




2010թ.-ին ապահովագրական ընկերությունների ծախսերի մեջ տեսակարար կշիռ են կազմել ոչ տոկոսային ծախսերը, որոնք կանխատեսվող ժամանակահատվածում շարունակաբար կնվազեն, իսկ զուտ ապահովագրական հատուցումները կաճեն[2]:

[2] Զուտ ապահովագրական հատուցումները հավասար են ընդհանուր ապահովագրական հատուցումների և այդ հատուցումներում վերաապահովագրողների մասնաբաժնի տարբերությանը:

Ստորև ներկայացված է ապահովագրական ընկերությունների ծախսերի կառուցվածքի դինամիկան 2010-2013թթ. համար՝

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԴԻՆԱՄԻԿԱ



Ապահովագրական ընկերությունները կանխատեսում են տոկոսային եկամուտների 49.3% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում 2013թ.-ին տվյալ ցուցանիշը կկազմի 3.1 մլրդ դրամ 2010թ.-ի 944.9 մլն դրամի փոխարեն: Տոկոսային եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներից և դրանց տրամադրված փոխառություններից ստացվող տոկոսային եկամուտները, որոնք 2010թ.-ին կազմել են տոկոսային եկամուտների 84.4%-ը, 2013թ.-ին կանխատեսումների համաձայն կկազմեն 66.6%: 2010թ.-ին ընդհանուր տոկոսային եկամուտներում կազմելով 12.1% տեսակարար կշիռ՝ կաճեն տոկոսային եկամուտները պետական արժեթղթերից և 2013թ.-ին կանխատեսումների համաձայն կկազմեն 18.4%:

Ապահովագրական ընկերությունների տոկոսային ծախսերի ծավալն ինչպես 2010թ.-ի, այնպես էլ 2013թ.-ի տվյալներով բավականին փոքր կլինի՝ համապատասխանաբար 7.6 մլն դրամ և 18.1 մլն դրամ:

Ապահովագրական ընկերությունների ոչ տոկոսային եկամուտների ծավալը 2010թ.-ին կազմել է -441.0 մլն դրամ՝ պայմանավորված արտարժույթի վերագնահատումից ստացված խոշոր վնասով, իսկ 2013թ.-ին համաձայն կանխատեսումների կկազմի -30.3 մլն դրամ:

Ապահովագրական ընկերությունների ոչ տոկոսային ծախսերը տարեկան միջինում կաճեն 16.5%-ով և 2013թ.-ին կկազմեն 5.3 մլրդ դրամ 2010թ.-ի 3.4 մլրդ դրամի փոխարեն: Ընդ որում՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով ծախսերը 2010-2013թթ.-ի ընթացքում կապահովեն 23.9% միջին տարեկան աճ և 2013թ.-ին կկազմեն 2.5 մլրդ դրամ: Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդամենը ոչ տոկոսային ծախսերի մեջ 2011-2013թթ.-ի ընթացքում կավելանա 8 տոկոսային կետով և 2013թ.-ին կկազմի համախառն ոչ տոկոսային ծախսերի 47.4%-ը:

[3] Ներառվում է բոլոր տեխնիկական պահուստների փոփոխությունը՝ բացառությամբ չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխության:


Ապահովագրական ընկերությունները նախատեսում են ուսուցման ծախսերի ավելացում կանխատեսվող ժամանակաշրջանի համար. ուսուցման ծախսերը տարեկան միջինում կաճեն 74.6%-ով և 2013թ.-ին կկազմեն 30.7 մլն դրամ:

Հարկ է նշել նաև, որ ապահովագրական ընկերությունները չեն նախատեսում զգալիորեն ավելացնել գովազդի գծով ծախսերը: Դրանք տարեկան միջինում կաճեն 17.5%-ով և 2013թ.-ին կկազմեն 749.1 մլն դրամ կամ համախառն ոչ տոկոսային ծախսերի 14.1%-ը:


Ապահովագրական ընկերությունների կանխատեսումներով զուտ շահույթ / ակտիվների միջին մեծություն[4] (ROA) և զուտ շահույթ / ընդհանուր կապիտալի միջին մեծություն[5] (ROE) ցուցանիշները 2013թ.-ին համապատասխանաբար կկազմեն 11.6% և 19.9% (2010թ.-ին՝ -5.8% և -8.7%):

Ստորև ներկայացված են վերոհիշյալ երկու ցուցանիշների փոփոխությունները 2010-2013թթ. ընթացքում.

«ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ / ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ» ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ



«ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ» ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ




[4] Ակտիվների միջին մեծությունը հաշվարկելիս ակտիվների տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:

[5] Ընդհանուր կապիտալի միջին մեծությունը հաշվարկելիս կապիտալի տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:


Ապահովագրական գումարներ

Ապահովագրական ընկերությունների կանխատեսումների համաձայն՝ 31.12.2013թ.-ի դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող ապահովագրության պայմանագրերով ստանձնած ռիսկերի (ապահովագրական գումարների) մեծությունը կկազմի 11.5 տրլն դրամ՝ 2010թ.-ի 3.6 տրլն դրամի փոխարեն:


Ստորև ներկայացված է ապահովագրական գումարների դինամիկան 2010-2013թթ. համար.



Տարբեր դասերի գծով ապահովագրական գումարների տեսակարար կշիռներն ընդհանուր ապահովագրական գումարների մեջ 2010թ.-ին և 2013թ.-ին ներկայացված են ստորև.



31.12.2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ



ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում ապահովագրական ընկերությունները նախատեսում են շարունակել համագործակցությունը առկա վերաապահովագրական ընկերությունների հետ, ինչպես նաև ապահովագրության նոր դասերի ներդրման և ռիսկերի տեղաբաշխումն ավելի դիվերսիֆիկացնելու նպատակով՝ բանակցել մի շարք նոր վերաապահովագրողների հետ: Ռիսկերի վերաապահովագրությունը կամ վերաապահովագրական գումարների տեսակարար կշիռն ընդհանուր ապահովագրական գումարներում 2011-2013թթ.-ին կունենա նվազման միտում՝ պայմանավորված հետևյալ հանագամանքներով.

Ընդհանուր կապիտալի շարունակական աճ, որը տեղի կունենա չբաշխված շահույթի աճի և կանոնադրական կապիտալի համալրման հաշվին, և հնարավորություն կտա ընկերություններին ընդհանուր ապահովագրական գումարներում ունենալ առավել մեծ սեփական մասնակցության կշիռ՝ չխախտելով ապահովագրական ընկերությունների $Ն_3$ նորմատիվը:

ԱՊՊԱ-ի գծով ստանձնած ռիսկերի աճը կտրուկ կմեծացնի ապահովագրական գումարների ընդհանուր ծավալը, և քանի որ ընկերությունները մտադիր չեն լայնածավալ վերաապահովագրություն անել նշված ռիսկի գծով, ապա վերաապահովագրության կշիռը կնվազի:

Ավելի խելամիտ վերաապահովագրության քաղաքականության իրականացում, ինչն ընկերություններին հնարավորություն կտա վերաապահովագրության ոչ համամասնական բնույթի պայմանագրեր կնքել և նվազեցնել վերաապահովագրության ծավալները:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- Ապահովագրական ընկերությունների հիմնական մասը արդեն ստեղծել է և պատրաստվում է ընդլայնել գործակալական ցանցը, որը բաղկացած է ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանցից և հնարավորություն է տալիս ապահովագրական գործունեություն ծավալել ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում: Կան ապահովագրական ընկերություններ, որոնք նախատեսում են ընդլայնել գործակալական ցանցը, սակայն չեն նախատեսում նշված գործակալների հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների ներդրում:

- Որոշ ընկերությունների դատողություններում հակասություն կա, մասնավորապես՝ նշելով ֆինանսական ճգնաժամի բացասական հնարավոր հետևանքները և կամավոր ապահովագրության դանդաղ աճը, միաժամանակ կանխատեսում են ապահովագրավճարների և շահութաբերության զգալի աճ:

- Ապահովագրական ընկերութուններից շատերը դեռևս չեն լուծել անհրաժեշտ ծրագրային ապահովման հարցը:

- Ընկերություններից շատերի համար եկամտի ստացման հիմնական աղբյուր շարունակում են մնալ ապահովագրավճարներից ստացվող մուտքերը:

- Ապահովագրական ընկերությունների մեծ մասը պլանավորում է ավելացնել սեփական պահումներն ի հաշիվ վերաապահովագրությանը փոխանցվող ռիսկերի նվազեցման: Որոշ ընկերություններ դրան զուգահեռ պատրաստվում են ապահովագրության որոշ դասերի գծով անցում կատարել ոչ համամասնական եղանակով վերաապահովագրության կիրառմանը: Սակայն կան ընկերություններ, որոնք առանց հստակ վերաապահովագրական քաղաքականության և առանց պատճառների հիմնավորման պարզապես նվազեցնելու են վերաապահովագրությանը փոխանցվող ռիսկերի մեծությունը: Սա կարող է խաթարել ապահովագրական ընկերությունների վճարունակությունը:

- Ապահովագրական ընկերություններից քչերն են պատկերացնում ռիսկերի կառավարման գործընթացը և հիմնականում ռիսկերի կառավարման հստակ մեխանիզմներ չունեն:

- Ընկերությունները հեշտության համար և նպատակ ունենալով չխախտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվները՝ նախընտրում են ներդրումներ իրականացնել հիմնականում բարձր իրացվելի ակտիվներում, ընդ որում՝ մեծ կշիռ են կազմում արտարժութային ներդրումները, որոնցով պայմանավորված աճում է արտարժութային տատանումներից բխող ռիսկը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2011-2013թթ. ՀԱՄԱՐ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011	2012	2013
Ակտիվներ, այդ թվում՝	**25,621,953**	**28,198,826**	**32,921,266**	**38,830,095**
ավանդներ բանկերում	*3,453,544*	*17,331,837*	*20,250,234*	*23,899,772*
արժեթղթեր	*2,590,310*	*3,911,561*	*4,950,004*	*6,309,511*
սպացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով	*2,290,566*	*2,003,277*	*2,175,263*	*2,477,194*
Պարտավորություններ, այդ թվում՝	**13,094,526**	**12,105,933**	**13,902,348**	**16,095,182**
ապահովագրական պահուստներ	*2,916,638*	*7,054,386*	*8,472,423*	*10,187,861*
վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	*1,812,802*	*1,342,331*	*1,475,893*	*1,621,870*
Ընդհանուր կապիտալ, այդ թվում՝	**12,527,427**	**16,092,894**	**19,018,918**	**22,734,913**
կանոնադրական կապիտալ	*11,673,182*	*12,989,892*	*12,989,892*	*12,989,892*
չբաշխված շահույթ	*(21,750)*	*2,789,871*	*5,684,683*	*9,354,720*
Ապահովագրավճարներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**8,253,381**	**20,908,618**	**24,398,169**	**27,935,944**
Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**4,010,507**	**4,751,866**	**5,338,220**	**5,988,242**
Ապահովագրական հատուցումներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**1,744,760**	**6,684,623**	**8,802,875**	**10,474,669**
Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ոչ կյանքի ապահովագրության ապահովագրական հատուցումների գծով	**469,089**	**815,681**	**834,953**	**955,914**
Տոկոսային եկամուտներ, այդ թվում՝	**944,871**	**2,030,215**	**2,491,103**	**3,147,326**
տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներից և դրանց տրամադրված փոխառություններից	*797,900*	*1,417,391*	*1,690,582*	*2,095,428*
տոկոսային եկամուտներ պետական արժեթղթերից	*114,518*	*307,771*	*435,206*	*578,509*
Տոկոսային ծախսեր	**7,614**	**11,688**	**13,986**	**18,121**
Ոչ տոկոսային եկամուտներ	**(440,957)**	**(22,483)**	**(32,089)**	**(30,294)**
Ոչ տոկոսային ծախսեր, այդ թվում՝	**3,353,588**	**4,628,343**	**4,925,118**	**5,301,008**
աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	*1,319,773*	*2,044,319*	*2,258,227*	*2,512,974*
ուսուցման ծախսեր	*5,776*	*20,645*	*24,854*	*30,748*
գովազդի գծով ծախսեր	*461,301*	*828,118*	*782,520*	*749,113*
Շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**(957,713)**	**2,590,370**	**3,080,147**	**4,145,969**
Շահաբաժիններ	**-**	**158,940**	**391,512**	**591,940**
Ոչ կյանքի ապահովագրության գծով գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ	**3,614,129,741**	**7,784,499,725**	**10,201,303,121**	**11,463,530,578**
Վարչական աշխատողների թիվ (հոգի)	**765**	**807**	**843**	**903**
Սպասարկող աշխատողների թիվ (հոգի)	**36**	**42**	**50**	**57**

ՀԱՎԵԼՎԱԾ 2: *ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ*

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Ապահովագրավճարներ				Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ			
	2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	245,081	515,212	580,507	652,635	36,079	127,890	141,601	156,743
Առողջության ապահովագրություն	1,092,367	1,322,875	1,557,392	1,720,346	16	-	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	1,587,123	2,484,031	2,865,749	3,273,969	526,896	922,562	1,056,198	1,200,381
Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն	-	-	39,000	45,000	-	-	21,450	24,750
Օդանավերի ապահովագրություն	1,224,990	1,371,229	1,513,053	1,669,752	1,145,301	1,222,584	1,348,497	1,487,539
Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն	761	918	1,055	1,213	720	829	953	1,096
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	443,440	562,399	658,602	765,886	258,983	317,895	361,769	424,433
Գույքի ապահովագրություն*	2,174,471	2,540,990	2,886,565	3,274,742	1,458,954	1,670,103	1,859,898	2,081,754
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	194,574	11,003,058	13,021,963	15,121,135	56,847	47,033	52,357	58,795
Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	2,351	2,836	3,260	3,749	2,226	2,560	2,944	3,386
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	524,246	448,199	515,067	552,887	284,872	182,391	201,307	220,386
Վարկի ապահովագրություն	-	62,000	67,400	73,520	-	6,000	6,200	6,510
Երաշխիքի տրամադրում	7,749	8,414	9,677	11,128	893	1,027	1,181	1,358
Ֆինանսական վնասների ապահովագրություն	453,081	182,908	209,985	236,621	187,982	160,794	181,858	205,179
Դատական և արտադատական իրավական ծախսերի ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Աջակցության ապահովագրություն	306,258	407,303	473,207	538,324	50,737	90,199	102,006	115,933

*Ներառում է հրդեհից ու բնական աղետներից գույքի ապահովագրությունը և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 (շար.): *ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ*

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Ապահովագրական հատուցումներ				Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով			
	2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	22,538	58,781	79,333	95,582	746	15,249	23,148	25,380
Առողջության ապահովագրություն	619,275	885,445	1,086,851	1,228,766	-	-	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	662,083	965,335	1,146,999	1,310,110	256,564	397,305	467,698	520,717
Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն	-	-	1,950	7,200	-	-	1,755	6,480
Օդանավերի ապահովագրություն	-	10,015	11,458	12,983	-	6,638	7,474	8,418
Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	69,989	99,332	115,445	128,557	41,347	68,929	79,693	88,964
Գույքի ապահովագրություն	96,480	156,499	190,126	223,664	100,601	110,860	135,703	163,021
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	97,826	4,140,537	5,887,343	7,147,139	35,335	25,961	26,285	26,501
Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	11,968	61,540	69,625	77,992	11,207	27,175	26,093	38,366
Վարկի ապահովագրություն	-	10,575	24,678	27,083	-	600	620	651
Երաշխիքի տրամադրում	31,308	20,074	17,336	19,936	13,529	1,840	2,116	2,434
Ֆինանսական վնասների ապահովագրություն	70,521	153,551	26,937	31,317	-	114,825	19,040	23,613
Դատական և արտադատական իրավական ծախսերի ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Աջակցության ապահովագրություն	62,772	122,938	144,794	164,339	9,760	46,298	45,328	51,369

ՀԱՎԵԼՎԱԾ 2 (շար.)՝ *ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-13ԹԹ. ՀԱՄԱՐ*

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ			
	2010	2011	2012	2013
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	92,223,823	201,364,237	224,902,286	250,738,704
Առողջության ապահովագրություն	77,230,510	114,063,861	127,800,431	140,088,828
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	91,186,425	137,789,402	157,343,924	178,139,545
Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն	-	-	17,160,000	19,800,000
Օդանավերի ապահովագրություն	1,104,203,587	1,185,436,891	1,252,749,231	1,324,275,839
Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն	275,705	303,964	335,121	369,471
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	144,529,476	219,952,686	250,442,446	282,142,102
Գույքի ապահովագրություն	1,245,548,388	1,484,064,509	1,660,039,337	1,852,718,252
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	27,233,811	3,572,005,102	5,527,436,753	6,310,079,192
Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	850,450	937,621	1,033,727	1,139,684
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	319,973,493	149,292,732	165,480,738	179,506,364
Վարկի ապահովագրություն	-	1,060,000	1,163,000	1,276,150
Երաշխիքի տրամադրում	5,908,427	2,618,840	2,042,062	2,251,373
Ֆինանսական վնասների ապահովագրություն	44,423,653	17,203,088	17,744,097	18,573,886
Դատական և արտադատական իրավական ծախսերի ապահովագրություն	-	-	-	-
Աջակցության ապահովագրություն	460,541,994	698,406,791	795,629,967	902,431,189